# 418

1. Անձայն խորհում եմ, մի պահ ետ նայում,
Տեսնում եմ՝ ինչպես էի ես երեսիդ խփում
Ու սուրբ ձեռքերդ էի այն խաչին գամում,
Խորհում եմ՝ մի՞թե ունեմ ես ներում:
Բայց արյունը Քո, այն սուրբ արյունը Քո
Ունի իր մեջ մեծ զորություն:

Շնորհիվ արյան, Քո սուրբ արյան,
Բացում ես մեզ կյանքի ճամփան,
Մոտեցնում ես մեզ Քո լույսին,
Ո՛վ օրհնյալ Քրիստոս անգին,
Մաքրում ես մեզ մեր մեղքերից,
Քաշում, հանում մահվան ճահճից
Եվ օրհնում ես մեզ կրկին, Քրիստոս:

2. Երբ ես կանգնում եմ այն սուրբ արյան ներքո,
Հոսում է վրաս խոցված ոտքերից Քո,
Մաքրում, հանում է սպիներն անգամ մեղքի,
Մի ցանկապատ է դառնում անխախտելի,
Քանզի արյունը Քո, այն սուրբ արյունը Քո
Ունի իր մեջ մեծ զորություն: